ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ՆԱԶԻԿ ԱՎԴԱԼՅԱՆ» ՍՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ

Հաշվի առնելով, որ Կողմերն ընդունում են փոխադարձ համագործակցությունը և փորձի փոխանակումը ի նպաստ հայկական սպորտի զարգացման,

Նկատի ունենալով, որ համատեղ համագործակցությունը հնարավոր է միայն կառուցողական փոխգործակցության և փոխօգնության կազմակերպմամբ,

Կարևորելով սպորտային գիտության կիրառական և պրակտիկ հնարավորությունները կրթության կազմակերպման գործում,

Ընդունելով Կողմերի պատրաստակամությունը՝ համատեղ հետազոտություններ իրականացման, ուսանողների գործնական դասերի կազմակերպման, համատեղ գիտական միջոցառումների և սեմինարների կազմակերպման համատեքստում.

Հիմք ընդունելով սույն Հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները,

Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝

1. Համագործակցության նպատակը

Հուշագրի նպատակն է համագործակցություն հաստատել երեխաների և երիտասարդների մարզական կրթության, պրոֆեսիոնալ մարզիկների պատրաստման և մարզական ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ:

2. Համագործակցության ուղղությունները

Սույն հուշագրով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետ՝ Ինստիտուտ) և «Նազիկ Ավդալյան» սպորտի զարգացման հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) պատրաստակամ են պարբերաբար միմյանց տեղեկացնել և համատեղ քննարկել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցեր, այդ թվում.

2.1. Կրթական ծրագրեր

- Համատեղ դասընթացների և սեմինարների կազմակերպում:
- Ուսանողների պրակտիկայի իրականացում Հիմնադրամի ծրագրերում:

2.2. Մարզչական և մասնագիտական աջակցություն

• Ինստիտուտի դասախոսների ներգրավում մարզադպրոցների ու մարզահամալիրների աշխատանքներում:

• Մարզիչների և մասնագետների վերապատրաստում համատեղ ծրագրերի միջոցով:

2.3. Հետազոտություն և նորարարություն

• Սպորտային գիտության և մեթոդաբանության ոլորտում համատեղ հետազոտություններ:

• Նորարարական առողջապահական և ֆիզիոթերապևտիկ մեթոդների ներդրում:

2.4. Մարզական միջոցառումներ

• Համատեղ մրցաշարերի և կրթամարզական միջոցառումների կազմակերպում:

• Միջազգային փորձի փոխանակման ծրագրերի իրականացում:

3. Կազմակերպչական դրույթներ

3.1. Կողմերը համատեղ մշակելու են տարեկան գործողությունների ծրագիր:

3.2. Յուրաքանչյուր կողմ ապահովում է իր ներդրումները ֆինանսների, մասնագետների կամ ենթակառուցվածքների տեսքով:

3.3. Հուշագիրը չի ենթադրում իրավական կամ ֆինանսական պարտավորություններ, այլ ձևավորում է համագործակցության շրջանակ:

4. Համագործակցության սկզբունքներ

Կողմերը Հուշագրով նախատեսված գործողությունները կիրականացնեն օրինականության, փոխադարձ հարգանքի, վստահության և թափանցիկության սկզբունքներով:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1. Յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի միակողմանիորեն դադարեցնել հուշագրի գործողությունը՝ մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս Կողմին:

5.2. Սույն հուշագիրը կնքվում է երկու օրինակից՝ հայերեն լեզվով, և երկու օրինակներն ունեն հավասար իրավաբանական ուժ:

5.3. Սույն հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են հուշագրի անբաժանելի մասը:

5.4.Հետագա համագործակցությունը կարգավորվելու է Կողմերի միջև կնքվող առանձին պայմանագրերով:

5.5. Սույն հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2025 թ. նոյեմբերի ---ին:

5.6. Սույն հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում 3 (երեք) տարի ժամկետով:

6" Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Ինստիտուտ	**Ընկերություն**
այաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	ազիկ Ավդալյան» սպորտի զարգացման հիմնադրամ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 11	ՀՀ ք. Երևան, Ազատության 24/15
ռեկտոր՝ Տիգրան Սիմոնյան	նախագահ՝ Նազիկ Ավդալյան
ստորագրություն, Կ.Տ.	ստորագրություն, Կ.Տ.